

**ОБОРОНА И БЕЗОПАСНОСТЬ**

**Ապագայի պատերազմների և զինված հակամարտությունների առանձնահատկությունները**

Հովհաննիսյան Հայկ Հ.

Ռազմական գիտությունների թեկնածու, դոցենտ, գնդապետ,  
ՀՀ ՊՆ Պաշտպանական ազգային հետազոտական համալսարան,  
Ռազմավարական առաջնորդության և կառավարման հետազոտությունների կենտրոնի  
ավագ դասախոս (Երևան, ՀՀ)

<https://orcid.org/0000-0002-1520-9224>  
[hayk.hovhannisyanyan79@gmail.com](mailto:hayk.hovhannisyanyan79@gmail.com)

ՀՏԳ՝ 355.4; EDN: EGERHA;

DOI: 10.58587/18292437-2024.2-9

Հանգուցաբառեր՝ ապագայի պատերազմ, զինված հակամարտություն, զորքերի կառավարում, ռազմական շինարարություն

**Особенности будущих войн и вооруженных конфликтов**

**Оганесян Гайк О.**

кандидат военных наук, доцент, полковник,

Старший преподаватель центра исследований стратегического руководства и лидерства,  
Национальный оборонный исследовательский университет МО РА (Ереван, РА)

**Аннотация.** Глобальные геополитические трансформации, беспрецедентные тенденции развития новейших технологий научно-технического и военного предназначения оказывают несомненное влияние на способы ведения операций и сражений в войнах и вооруженных конфликтах. В статье представлен авторский анализ характера возможных будущих войн и вероятного характера вооруженных конфликтов, а также способов ведения боевых действий в будущем и основные особенности, тенденции их развития.

**Ключевые слова:** будущая война, военный конфликт, управление войсками, военное строительство

**Characteristics of future wars and armed conflicts**

**Hovhannisyanyan Hayk H.**

PhD in Military Science, Associate professor, Col.

Senior Lecturer, Center for Research on Strategic Leadership and Management,  
National Defense Research University, Ministry of Defence of the Republic of Armenia (Yerevan, RA)

**Abstract.** Global geopolitical transformations, unprecedented trends in the development of the advanced technologies of scientific, technical and military significance have an undeniable impact on the ways of conducting operations and battles in warfare and armed conflicts. The article presents the author's analysis of possible future wars and the likely nature of armed conflicts also future ways of conducting combat operations, as well as their main features and development trends.

**Keywords:** future war, armed conflict, control of troop management, military construction

Տարբեր դարաշրջանների խոշոր մտածող-ները զբաղվել են պատերազմների պատճառ-ների վերլուծությամբ և իրենց աշխատություն-ներում մենք կարող ենք հանդիպել այս մասին տարատեսակ տեսություններ և կարծիքներ: Կարլ ֆոն Կլաուզեփցը իր «Պատերազմի մա-սին» աշխատությունում ընդգծում է տարածք-ների ընդլայնմանը ձգտելու դերը [1], Ադամ Սմիթը և այլ նշանավոր տնտեսագետներ նշում են, որպես պատերազմի առաջացման պատճառ՝ տնտեսական գերազանցության համար մրցակ-ցությունը [2, էջեր 590-591]: Էմանուիլ Կանտը, իր համախոհների հետ ուշադրություն էին հրավիրում ազգերի միջև հակամարտություն-ների առաջացմանը գաղափարախոսական և

կրոնական տարածայնությունների հիմքով: Թոմաս Հոբսը գտնում էր, որ պատերազմի և քառսի կանխարգելման գործում առանցքային է պետական իշխանության և քաղաքականության կայունությունը՝ շեշտը դնելով ուժեղ կառավա-րության անհրաժեշտության վրա [3, էջ 76]: Ժան-ժակ Ռուսսոն հասարակությունների միջև ընդհարումների պատճառ էր տեսնում մշակու-թային և էթնիկ տարբերությունները [4, էջ 67], իսկ հոգեբանության տեսանկյունից շատ տեսաբաններ, այդ թվում Չիզմունդ Ֆրեյդը դիտարկում էին հոգեբանական այնպիսի ասպեկտները, ինչպես ագրեսիան և գերիշխելու ձգտումը, որպես գործոններ, որոնք ազդում են միջազգային հարաբերությունների վրա: Ըստ

ելության, պատերազմների և զինված հակամարտությունների ծագումը, վարման կարգը և բնույթը բնութագրվում են բազմաթիվ գործոններով, սակայն ակնհայտ է, որ ապագայի պատերազմներն ու զինված հակամարտությունները չեն առաջանալու նույնիսկ շատ կարևոր բայց որևիցե մեկ գործոնի պատճառով: Դրանք հետևանք կլինեն տարբեր հակասությունների և պատճառների բարդ միահյուսման, և, հետևաբար, անհրաժեշտ է հաշվի առնել այդ բազմաթիվ գործոնների բնույթը ապագայի հնարավոր պատերազմները բնորոշելիս:

Վերջին ժամանակների տեղային պատերազմների ու զինված հակամարտությունների (Միդիա, Արցախ, Ուկրաինա, Իսրայել) վերլուծությունները թույլ են տալիս եզրակացնել, որ դրանք, մարտական գործողությունների վարման ձևերի և սկզբունքների առումով ունեին զգալի տարբերություններ: Ժամանակակից պատերազմների վարման այս առանձնահատկությունը կշարունակի պահպանվել առնվազն երկու տասնամյակ: Ինչպես ցույց են տալիս ուսումնասիրությունները, վերջին ժամանակների տեղային պատերազմների և զինված հակամարտությունների զգալի մասը կրել է ասիմետրիկ բնույթ, դրանք տեղի են ունեցել տեխնիկական առումով, ինչպես նաև զինված ուժերի որակական վիճակի (սպառազինություն, ռազմական տեխնիկա, ինչպես նաև՝ ռազմական գործողությունների վարման ձևեր ու եղանակներ) զարգացման տարբեր փուլերում գտնվող հակառակորդների միջև: Այս առումով հատկանշական է ԱՄՆ ռազմական դոկտրիններում ծավալուն անդրադարձը ասիմետրիկ գործողություններին, որպես ապագայի պատերազմներում հրամանատարների գործողությունների կարևոր եղանակի [5]:

Բոլոր այս հակամարտությունները զարգանում էին ռազմական գործողությունների մեկ թատերաբեմի սահմաններում, սակայն լայնորեն կիրառվում էին դրանից դուրս տեղակայված ուժերն ու միջոցները: Վստահորեն կարելի է ենթադրություն անել, որ մարտական գործողությունների վարման նմանատիպ մոտեցումները կպահպանվեն նաև մոտ ապագայում, մասնավորապես, հաշվի առնելով, որ ռազմական գիտությունն ու պրակտիկան այսօր հանգել են հակառակորդի «ձանրության կենտրոնի»<sup>1</sup> վրա ազդեցության առանցքային կարևորությանը պատերազմի վարման և ելքի որոշման

հարցերում: Հետևաբար առաջ է գալիս նաև այն եզրահանգումը, որ առանձնահատուկ կարևորություն է ստանում ռազմական գործողություններ վարելիս ուժի մեկ կետում պրոյեկտման հայեցակարգը, որը ժամանակին մշակվել է ԱՄՆ բանակում: Այս առումով հատկանշական է, որ խոսքը վերաբերվում է ոչ թե կոնկրետ որևէ տարածքի, ունակության կամ բնութագրի, այլ որոշակի հատկանիշների, գործառնությունների համախմբի, որ կարող է առավելագույն օգուտը քաղել տվյալ տեղադիրքից կամ տեղանքից [6]: Միաժամանակ, անհրաժեշտ է ուշադրության արժանացնել այն հանգամանքին, որ տեղային հակամարտություններն ուղեկցվել են և կշարունակեն ուղեկցվել առանձնակի ուժգնությամբ և սովորաբար դրանք նպատակ են հետապնդում հակառակորդ պետության պետական համակարգի լիակատար ոչնչացման:

Գաղտնիք չէ, որ պատերազմի ընթացքի և ելքի վրա առանցքային ազդեցություն ունի դրա սկզբնական ժամանակահատվածը իսկ գիտատեխնիկական այսօրվա բարձր ինտենսիվությամբ զարգացման պայմաններում պատերազմի սկզբնական ժամանակաշրջանի դերը էլ ավելի է կարևորվում: Եվ, քանի որ պատերազմի և ոչ մի պլան չի դիմանում հակառակորդի առաջին հարվածին [7], անհրաժեշտ է առանձնահատուկ ուշադրություն դարձնել պետությունը և դրա զինված ուժերը պատերազմին պատրաստելու պատասխանատու և բարդ գործընթացին: Պատերազմի սկզբնական փուլը հակառակորդ կողմերը կարող են օգտագործել ի շահ ռազմավարական և օպերատիվ նախաձեռնությունը նվաճելուն և սեղմ ժամկետներում առաջադրված նպատակներին հասնելուն: Այդ նպատակներին հասնելու ընթացքում զանգվածայնորեն կկիրառվեն հեռահար, բարձր ճշգրտության զենքերը, ռազմական նախաձեռնվածության ռոբոտացված համալիրները, այդ թվում՝ արհեստական բանականության հենքի վրա աշխատող, տեղեկատվական պատերազմի սարքավորումները և օդուժը [8]: Այդուհանդերձ, հակառակորդի տարածքի գրավման և պահման մարտական գործողությունների հիմնական բեռը կշարունակի մնալ զինված ուժերի ցամաքային զորքերի բաղադրիչը կազմող զորամասերի և ստորաբաժանումների ուսերին: Նկատի ունենալով ասվածը, անհրաժեշտ է ընդձեռնել, որ տեխնոլոգիական առումով զարգացած զինված ուժեր ունեցող պետությունների ռազմական տեսություններում հաստատվել են պաշտոնական հայեցակարգեր զինված ուժերի բոլոր տեսակների և գորատեսակների համատեղ կիրառման նպատակով: Այս առումով արժեքավոր է Ջ. Ուորդենի հիմնական գաղափարն այն մասին, որ օդային հզորությունը յուրահա-

<sup>1</sup> Ըստ Պաշտպանական-անվտանգային տերմինների բացատրական հայերեն-ռուսերեն-անգլերեն, ռուսերեն-հայերեն, անգլերեն-հայերեն մեծ բառարանի, ձանրության կենտրոն - центр тяжести - center of gravity: Կառուցվածի տերմին, որը նշանակում է զլիավոր հարվածի օբյեկտ, հիմնական ջանքերի կենտրոնացման կետ, ՆԱՏՈ-ի ռազմական պլանավորման ելադրություններից մեկը:

տուև ունակություն ունի առավելագույն արդյունավետությամբ և նվազագույն ծախսերով, հասնելու պատերազմի ռազմավարական նպատակներին և իր տեսական վերլուծություններում Ուորդենը հենվել է Կլաուզևիցի հայտնի, հակառակորդի «ծանրության կենտրոնի» սկզբունքի վրա: Միևնույն ժամանակ, որոշ փորձագետներ, ռազմական ոլորտի վերլուծաբաններ փորձում են ապացուցել զինված ուժերի որևէ տեսակի բացարձակ գերակայությունը մյուսների նկատմամբ և սա մասնավորապես վերաբերվում է ռազմաօդային ուժերին և հակաօդային պաշտպանության ուժերին: Ռազմաօդային ուժերի գերակայության մասին շեշտադրվում է վաղուց, դեռ նախորդ դարի կեսերից երբ իտալացի ռազմական տեսաբան, գեներալ Դուէն զարգացրեց օդային պատերազմի տեսությունը և առաջ քաշեց այն միտքը, որ անհրաժեշտ է անցկացնել քաղաքների զանգվածային ռմբահարումներ՝ նպատակ ունենալով գործադրելու բարոյական ազդեցություն և ստիպելու հակառակորդին կապիտուլյացիայի ենթարկվել: Վերջին ժամանակներում ռազմաօդային ուժերի որոշիչ դերի մասին ԱՄՆ ՌՕՌԲ գնդապետ, ռազմական տեսաբան Դ. Ուորենը զարգացրեց «ռազմավարական կաթվածի» տեսությունը, որում առաջնահերթությունը նույնպես դրվում էր ռազմաօդային ուժերի դերակատարմանը [20]:

Ի հակադրումն սրան մի շարք տեսաբաններ լիիրավ հիմունքներով ընդգծելով հակաօդային և հակահրթիռային պաշտպանության գործերի նշանակությունը, թերագնահատում են և սխալմամբ առաջարկում են կրճատել կամ սահմանափակ զարգացում ապահովել ցամաքային զորքերին: Ակնհայտ է, որ այս հարցում առավել կշռադատված գնահատման առաջնահերթությունները պահպանվում են պաշտոնական տեսակետներում և կանոնադրական դրույթներում:

Ապագա պատերազմների և զինված հակամարտությունների հիմնական առանձնահատկությունն այն է, որ զինված հակամարտության ընթացքում ընդհանուր առմամբ զինված պայքարի և մասնավորապես լայնածավալ պատերազմի ընթացքն ու ելքը կորոշվեն առաջին հերթին օդատիեզերական և տեղեկատվական տարածքներում առճակատմամբ, իսկ ցամաքային խմբավորումները կամրագրեն ձեռք բերված ռազմական հաջողությունները և ուղղակիորեն կապահովեն քաղաքական նպատակների իրագործումը: Միևնույն ժամանակ, դա չի բացառում իսկ պրակտիկան հաստատում է նաև զինված ուժերի բոլոր տեսակների և զորատեսակների միաժամանակյա ակտիվ գործողությունների տարբերակը: Այս համատեքստում, զինված պայքարի ռազմավարական, օպերատիվ

և մարտավարական մակարդակներում գործողությունների փոխադարձ կախվածությունն ու փոխադարձ ազդեցությունը հետզհետե առավել ակնհայտ կդառնա: Այսպիսով, սովորական՝ թե՛ սահմանափակ, թե՛ լայնածավալ պատերազմների առկա հայեցակարգերը էական փոփոխությունների են ենթարկվելու: Ընդ որում, հիմնական խնդիրները գլխավորապես լուծվելու են ոչ թե ցամաքային զորքերի խմբավորումների կամ առաջադիր զորամասերի ընդհարումներով, այլ սահմանային հեռավորություններից կրակային խոցման միջոցով: Միևնույն ժամանակ, սա չի բացառում, իսկ վերջին պատերազմների փորձը հաստատում է նաև զինված ուժերի բոլոր տեսակների և զորատեսակների միաժամանակյա ակտիվ գործողությունների տարբերակը:

Հիմնվելով վերջին տասնամյակի հակամարտությունների այս և այլ առավել տարածված հատկանիշների վերլուծության վրա՝ ներկա փուլում և տեսանելի ապագայում զինված պայքարի առանձնահատկությունների և բնույթի վերաբերյալ կարելի է անել հետևյալ հիմնարար եզրահանգումները:

Չինված ուժերը հաստատում և ապագայում կպահպանեն իրենց կենտրոնական դերը ուժային գործողություններ իրականացնելու ընթացքում: Ռազմաքաղաքական հաջողության հասնելու որոշիչ պահը պատերազմի և զինված հակամարտության սկզբնական շրջանում ռազմավարական նախաձեռնության նվաճումն է [9]:

Ապագայի զինված պայքարի առանձնահատկությունն այն կլինի, որ պատերազմի ժամանակ թշնամու հարձակմանը կարժանանան ոչ միայն ռազմական օբյեկտներն ու զորքերը, այլև երկրի տնտեսությունն իր ամբողջ ենթակառուցվածքով, քաղաքացիական բնակչությունը և տարածքը: Անկախ այն հանգամանքից, որ խոցման միջոցների ճշգրտության զարգացմանը, վերջին ուսումնասիրված բոլոր զինված հակամարտությունները հանգեցրել են խաղաղ բնակչության շրջանում զգալի քանակով զոհերի: Այս առումով պետության համար քաղաքացիական պաշտպանության և տարածքային պաշտպանության արդյունավետ համակարգ ստեղծելու անհրաժեշտություն է առաջանում:

Նախապատերազմյա, սպառնալի ժամանակահատվածի սկզբին ծավալված ուժերի և միջոցների խմբավորումների դերի բարձրացումը զինված հակամարտության ելքի նկատմամբ չի չեղարկում մարտունակ պահուստի և դրա զորահավաքի ու ծավալման համակարգի նշանակությունը: Դա հնարավորություն կստեղծի պահպանելու ուժային արձագանքման ռազմավարական ռեսուրսը զինված ընդհարման ընթացքում, իրավիճակի ցանկացած զարգացման դեպքում:

Մարտական գործողությունները բնութագրվելու են գորաշարժային օպերացիաների և դիրքային գործողությունների համադրությամբ: Հետախուզադիվերսիոն և պարտիզանական գործողությունները դիտարկվում են որպես «սովորական» պատերազմի մի մաս: Դա հաստատում է Չինված Ուժերի ուժերի և միջոցների հավասարակշռված կազմի, ինչպես նաև՝ համալիր մարտական պատրաստության անհրաժեշտությունը:

Պաշտպանվողների համար վճռական նշանակություն կունենա կառավարման միասնական կենտրոնով հետախուզության կատարյալ համակարգը, որը կունենա զինված ուժերի բոլոր տեսակների և հատուկ ծառայությունների հետախուզական տեղեկատվության հավաքման և մշակման լավ պաշտպանված կենտրոններ (կետեր), ինչպես նաև հնարավորություն կունենա կարճ՝ իրականին մոտ ժամանակում, վերամշակված հետախուզական տվյալները հասցնելու բոլոր շահագրգիռ մարմիններին: Այդպիսի հետախուզության առկայությունը հնարավորություն կտա ժամանակին բացահայտելու հակառակորդի հարձակման նախապատրաստումը և անցկացնելու տվյալ ժամանակահատվածի բոլոր անհետաձգելի միջոցառումները և այդ թվում, առաջնահերթ, գորքերի բերումը պատրաստության ամենաբարձր աստիճանների:

Չորքերի խմբավորումներում, բացի սովորական տարրերից, օպերատիվ գորաշարվածքում (մարտական կարգում) պետք է լինեն՝ ժամանակի իրական մասշտաբի շրջանակներում գործող հետախուզատեղեկատվական կենտրոն, գորքերի և զենքի կառավարման ավտոմատացված բարձր պաշտպանվածություն ունեցող համակարգ, բարձր ճշգրտության զենքի օդատիեզերական շարակարգ կամ դրա մասը, բարձր պաշտպանվածություն ունեցող պահուստ:

Ռազմական առումով աշխարհի զարգացած երկրների (առաջին հերթին՝ ԱՄՆ-ի և Ռուսաստանի) [10; 11] գործող ռազմավարական և օպերատիվ հայեցակարգերը այս կամ այլ կերպ որոշում են, որ զինված հակամարտությունում կամ պատերազմում զինված պայքարը կներառի չորս հիմնական փուլեր.

*Առաջինը* բաղկացած կլինի տեղեկատվական տիրույթում նախաձեռնության և գերազանցության նվաճումից (հասարակական գիտակցության վրա գերակշռող ազդեցությունում, գորքերի և զենքի կառավարումում):

*Երկրորդի* բովանդակությունը կլինի օդատիեզերական տիրույթում գերիշխանության (առավելության) նվաճումը:

*Երրորդի* ընթացքում ակնկալվում է նվաճել գերիշխանությունը ծովում և ցամաքում՝ ջախ-

ջախելով կամ զգալի թուլացնելով հակառակորդի գորքերի խմբավորումները:

*Չորրորդն* ավարտականն է, որի ընթացքում պետք է ամրագրվեն ձեռք բերված հաջողությունները և ստեղծվեն պայմաններ դրված նպատակներն իրացնելու համար:

Ժամանակակից պատերազմներում կիրառվող սպառազինության բնույթը անհրաժեշտություն է ստեղծում ունենալու այնպիսի ուժեր և միջոցներ, որոնք հարվածներ կհասցնեն հակառակորդի հեռահար, գերճշգրիտ զինատեսակներին, ավիացիային և անօդաչու թռչող սարքերին՝ տեղակայված հակամարտության բուն թատերաբեմից դուրս: Այս առումով պետության զինված ուժերին անհրաժեշտ են թե՛ սեփական ներուժի հեռահար, գերճշգրիտ զենքի, թե՛ այլ միջոցների առկայություն, որոնք հնարավորություն կտան տեղափոխելու մարտական գործողությունները հակառակորդի տարածք:

Գլխավոր ուշադրությունը պետք է դարձվի գորքերի կառավարման բոլոր օղակներում կայուն, հուսալի պահուստ ունեցող կառավարման համակարգի ստեղծմանը: Այդ նպատակով անհրաժեշտ է կիրառել բոլոր առկա և ստեղծվող նոր կապի համակարգերը, առավելագույնս ներգրավել օդային հրամանատարական կետերը, ինչպես նաև, ապահովել պետության ռազմաքաղաքական ղեկավարության հրամանները՝ կատարողներին հասցնելու անխափանությունը և դրանց անվերապահ կատարումը: Սա նշանակում է, որ զինված ուժերում զինվորական կարգապահության, օրինականության ամրապնդման, բարոյահոգեբանական ապահովման՝ շարքայինից մինչև զենեքայ, իրապես արդյունավետ համակարգի ստեղծման, ինչպես նաև հակահետախուզության մարմինների գործունեության արդյունավետության բարձրացման անհրաժեշտություն կա: Չինված հակամարտությունների ելքի վրա մեծ ազդեցություն կունենան հակառակորդի գորքերի և բնակչության շրջանում տեղեկատվական և քարոզական աշխատանքների իրականացման ուժերի և միջոցների առկայությունը:

Նշված միտումների պայմաններում ի հայտ են գալիս ռազմարվեստի և զինված պայքարի ցուցանիշների նոր ասպեկտներ, որոնք ընդհանուր առմամբ հետևյալում են:

Կփոխվեն վճռական ուղղությամբ ուժերն ու միջոցները կենտրոնացնելու սկզբունքի իրականացման եղանակները: Նոր, հեռահար միջոցները, մի շարք դեպքերում, հնարավորություն կտան գորաշարժի և գորքերի կուտակումների փոխարեն, հակառակորդի գորքերի որոշակի խմբավորումների վրա զանգվածայնացված կրակային հարված հասցնելու համար իրականացնել հետագծերի գորաշարժ: Իսկ գորքերի հարվածային խմբավորումները գլխավոր հար-

վածների ընտրված ուղղություններով կարող են առաջ քաշվել ամենավերջին պահին:

Էական փոփոխություններ տեղի կունենան պատերազմների և զինված հակամարտությունների արտաքին և ներքին ցուցանիշներում: Գլխավոր փոփոխությունները կարտահայտեն դրանց ներքին բովանդակությունը, որը կկայանա մեծ քանակի գործողությունների կոշտ միախառնման մեջ՝ ներգրավելով զինված ուժերի բոլոր տեսակները, զորատեսակները և հատուկ զորքերը, որոնք զինված պայքարի բոլոր ոլորտներում միաժամանակ կկատարեն մեծաքանակ բարդ, փոխկապակցված ռազմավարական, օպերատիվ և մարտավարական խնդիրներ: Հակառակորդի խոցման և ջախջախման հիմնական խնդիրները կլուծվեն ոչ թե հետևակի կամ հրասայլերի մեծ զանգվածների բախումներում, այլ, հիմնականում, հեռահար կրակային խոցման եղանակներով՝ կիրառելով գերճշգրիտ զինատեսակներ և անօդաչու թռչող սարքեր:

Տեղի կունենա հարձակումում և պաշտպանությունում զորքերի գործողությունների եղանակների հետագա մոտեցում: Ընդ որում, հարձակումը ապագայում կարող է դիտարկվել որպես կրակային և ռադիոէլեկտրոնային հարվածների համադրում: Կրակային միջոցների հեռահարության և արդյունավետության ավելացման հետ մեկտեղ անհրաժեշտություն է առաջանում ճակատով և խորությամբ զորքերի ապակենտրոնացման եղանակների ճշգրտման, կրակային բնագծերի՝ սպասման շրջաններից, զորքերի՝ բացազատման բնագծերից, երկրորդ շարակազմերից և պահուստներից հեռացման:

Աճում է բավականին ուժեղ ցամաքային զորքերի և ուժերի խմբավորումների վաղաժամ ստեղծման նշանակությունը, որոնք ունակ կլինեն ոչ միայն ետ մղելու անգամ զանգվածայնացված օդային հարվածներից հետո հակառակորդի հարձակումը, այլ նաև պատրաստ կլինեն՝ այդ թվում առանձին, ինքնաբավ խմբերով և ստորաբաժանումներով, անմիջապես իրականացնել հարձակողական գործողություններ հակառակորդի հետ անմիջական շփման պայմաններում: Նման և նմանատիպ իրավիճակներում կարևոր դեր կխաղան զորքերի բարձր շարժունությունը և նրանց ունակությունը այդ նպատակներով արդյունավետ կիրառելու ռազմաօդային միջոցները և դեսանտագրոհային ստորաբաժանումները:

Ապագայի մարտավարական գործողությունների բնութագրական գիծը կլինի կրակային մարտի վարման հեռահարության ավելացումը, զորքերը հնարավորություն կստանան կրակային միջոցներով խոցելու հակառակորդին, նրա հետ անմիջական շփման մեջ մտնելուց շատ առաջ: Նոր զինատեսակները [12] թույլ կտան հասնելու հարձակման անընդհատության, հարվածների

հանկարծակիության և շեշտակիության, զորքերի բարձր ակտիվության, շարժունության և կայունության: Մարտի բնութագրական առանձնահատկություններից մեկը կդառնա հակառակորդի օդային հարվածների կանխումն ու ետմղումը, պայքարը օդում գերակայության համար:

Առանձնահատուկ նշանակություն է ձեռք բերում հակառակորդի քաղաքական և տնտեսական կառավարման ենթակառուցվածքների, ինչպես նաև կապի և ռադիոէլեկտրոնային պայքարի համակարգերի արագ շարքից դուրս հանելն ապահովող զորքերի ունակությունը:

Ապագայի պատերազմներում առանցքային դեր է ունենալու ՀՕՊ լավ պաշտպանված, խանգարումակայուն համակարգը, որն ունակ կլինի պայքարելու հակառակորդի ցանկացած թռչող սարքավորման դեմ, այդ թվում փոքր չափսերի դրոնների և «Սթելս» տեխնոլոգիայով պատրաստված ապարատների, ինչպես նաև հեռանկարային ԱԹՄ-երի դեմ: Հակաօդային պաշտպանության արդիական համակարգեր արդեն այսօր են կիրառվում աշխարհի առաջատար պետությունների զինված ուժերում, դրանց շարքին են դասվում ամերիկաիսրայելական համատեղ մշակումը Arrow 3, որի ձեռք բերման պատրաստության մասին արդեն հայտնել է Գերմանիան [13], Ռուսաստանի ռազմարդյունաբերական համալիրի կողմից ստեղծվող նոր C-550 համալիրը [14]: ՀՕՊ այդպիսի համակարգերը պետք է իրականացնեն նաև հակահրթիռային պաշտպանության գործառնություններ:

Պլանավորելով իր ագրեսիան, հակառակորդը, կանցկացնի հարձակմանը իր նախապատրաստման սկիզբն ու բնույթը քողարկող միջոցառումների ընդարձակ համալիր գործողություններ: Այդ խնդրի լուծման արդյունավետ եղանակներից մեկը կարող է լինել ապատեղեկատվությանն ուղղված հատուկ օպերացիայի անցկացումը, որն իր մեջ կներառի փոխկապակցված և մանրակրկիտ կերպով փոխհամաձայնեցված միջոցառումներ՝ ուղղված իրական նպատակների վերաբերյալ հակառակորդ կողմին մոլորության մեջ գցելուն:

Թեև օդային գերակայության նվաճումը և գերճշգրիտ զինատեսակների զանգվածային կիրառումը պահպանում են զինված պայքարի ելքի վրա իրենց որոշիչ ազդեցությունը, դրանք չեն չեղարկում ցամաքային զորքերի ուժերով օպերացիաներ իրականացնելու անհրաժեշտությունը: Օդից աջակցության մեծ կախվածությունը զինված ուժերի մարտական կիրառումը սահմանափակող գործոն կդառնա: Այս համատեքստում, վստահորեն կարող ենք պնդել, որ աճում է մարտադաշտում հակաօդային պաշտպանության միջոցների կարևորությունը:

Միևնույն ժամանակ, ապագայի պատերազմների թվարկված բնորոշ գծերի վերլուծությունը ցույց է տալիս, որ սա «անհպում» պատերազմի դասական պատկերը չէ, այլ, ավելի շուտ, միջանկյալ (անցումային) տարբերակ է, որում դիտարկվում են ինչպես դասական համարվող պատերազմների, այնպես էլ նոր սերնդի պատերազմների առանձնահատկությունները: Այսօրվա դրությամբ «անհպում» պատերազմների հայեցակարգն իրենից ներկայացնում է լոկ տեսական մոդել, որն արտացոլում է որոշ պետությունների ցանկությունը՝ նվազեցնել իրենց ներգրավվածությունը ցամաքային ուժերի կիրառմամբ տարածաշրջանային հակամարտություններում [15]:

Համեմատելով ժամանակակից աշխարհում փաստացի երկու հակամարտող բևեռների՝ ԱՄՆ և ՌԴ, ռազմաքաղաքական դեկավարության հայացքները ապագայի պատերազմների բնույթի վերաբերյալ, տեսնում ենք, որ դրանք գրեթե նույնաբովանդակ են և գտնում են իրենց արտահայտումը հայեցակարգերում, կանոնադրական փաստաթղթերում, ուղերձներում և այլն: Այդպիսի հայեցակարգերից հիմնականների շարքին են դասվում ԱՄՆ ռազմավարական և օպերատիվ հայեցակարգերը, այնպիսիք, ինչպես "NATO's forward presence", "power projection", "comprehensive operations", "Vision 2025" [16; 17; 18; 19]: Այսպիսի փաստաթղթերում ապագա պատերազմների բնույթի կանխատեսումը սերտորեն կապվում է ԱՄՆ զինված ուժերի շինարարության և կիրառման հետ:

Ընդհանուր առմամբ, պատերազմի բնույթի վերաբերյալ հայացքները նույնպես համընկնում են, սակայն էական տարբերությունը կայանում է նրանում, որ ԱՄՆ բանակում դրանք արդեն գտել են իրենց գործնական կիրառումը վերջին տասնամյակների մարտական գործողություններում (Իրաք, Հարավսլավիա, Աֆղանստան), ի տարբերություն ՌԴ-ի, որ համեմատաբար վերջերս է սկսել դրանք կիրառել Ուկրաինական ռազմաճակատում: Բացի այդ, ԱՄՆ բանակի հրամանատարության հայացքները զինված ընդհարումների վարման ձևերի ու եղանակների վերաբերյալ, և այդ հայացքները կյանքի կոչելու նյութական հնարավորությունների առկայությունը, ըստ էության որոշում են ժամանակակից և ապագայի պատերազմների բնույթը: Այդ պատերազմներում ԱՄՆ զինված ուժերի առջև խնդիր է դրվում նվաճել ճնշող գերազանցությունը բոլոր ոլորտներում՝ տիեզերքում, երկրի վրա և ծովում, ինչպես նաև տեղեկատվական տիրություն: Այս առումով առանձնահատուկ ուշադրություն է դարձվում նոր զինատեսակների ստեղծման և դրանցով զինված ուժերը համարման գործընթացին:

Ի տարբերություն ցամաքային զորքերի շինարարության ԱՄՆ բանակի այս հայացքների և գործելաոճի, ՌԴ ՉՈՒ և դրանց կազմակերպական կառուցվածքը, չնայած ժամանակակից օպերացիաները բնութագրող գծերին և նոր միտումներին, մինչև վերջերս, սպառազինության, ռազմական տեխնիկայի, համագորային կազմավորումների կազմակերպական կառուցվածքների զարգացման հիմնական շեշտը դնում էին մտոհրաձգային և տանկային զորքերի կրակային և հարվածային հնարավորությունների զարգացման վրա: Այս ցուցանիշների աճն անհրաժեշտ է, բայց միևնույն ժամանակ անհրաժեշտ է նաև առաջանցիկ կերպով ավելացնել հետախուզության, զորքերի ավտոմատացված կառավարման համակարգերի, ինքնաբավության և շարժունության արդյունավետությունը: Ավաճում կարող ենք համոզվել օպերացիաների և մարտի վարման համար նախատեսված մարտական համակարգերի զարգացման ցուցանիշների հետևյալ համեմատությունից (Աղյուսակ 1).

Ապագա պատերազմներում և զինված հակամարտություններում մարտական գործողությունների բնույթի որոշման գործում մեծ նշանակություն ունեն օպերատիվ արվեստի և մարտավարության զարգացման միտումները: Վերլուծությունը ցույց է տալիս, որ այդ միտումներից հիմնականները հետևյալն են.

– մարտավարական մակարդակում աճում են զորքերի գործողությունների այնպիսի ձևերի նշանակությունը, ինչպիսիք են հարվածը, զորաշարժը և կրակային մարտը: Չորքերը հնարավորություն են ստանում կրակային միջոցներով հակառակորդին զգալի խոցում հասցնելու՝ նրա հետ անմիջական բախումից դեռ բավականին առաջ: Նոր զինատեսակները թույլ կտան հասնելու հարձակման անընդհատության, հանկարծակիության և հարվածների սրընթացության, զորքերի բարձր ակտիվության և շարժունության, իսկ պաշտպանությունում՝ հակառակորդին զգալի կորուստների հասցնելուն՝ դեռ անմիջական շփման մեջ չմտած,

– օպերատիվ մակարդակում, զորքերի գործողությունների գոտիների ընդարձակման հետ մեկտեղ տեղի կունենա զորքերի օպերատիվ խտությունների էական (մի քանի անգամ) նվազում,

– ագրեսիայի առաջին իսկ րոպեներից մարտական գործողությունները՝ լայն կիրառելով օդային կամ աներոմոբիլային դեսանտ, դիվերսիոն-հետախուզական խմբեր և հատուկ գործողությունների ուժեր, կրնոգրկեն զորամիավորումների (միավորումների) օպերատիվ շարվածքի (մարտակարգի) գրեթե բոլոր տարրերը,

– առաջին պաշտպանական գործողություններում հոծ պաշտպանական բնագծերի,

թևային կապի իսկ երբեմն նաև գործերի խմբավորումների միջև մարտավարական փոխգործողության բացակայության միտումները նույնպես աճում են, ինչը բերում է դրանց օպերատիվ շարվածքում զգալի ճեղքվածքների առկայության ոչ միայն պաշտպանությունում, այլ նաև հարձակումում,

– առաջադրված խնդիրների կատարման ժամանակ գործողությունների նոր եղանակների կիրառում. պաշտպանությունում՝ պաշտպանական և հարձակողական գործողությունների ռացիոնալ համադրումը, հարձակումում՝ բաց թևերն անցնելու ձգտումը, գործերի խմբավորումների միջև միջտարածությունների օգտագործումը և ջանքերի վճռական տեղափոխումը հակառակորդի օպերատիվ խորություն,

– հակառակորդի կողմից ոչ ավանդական (չմահաբեր) զինատեսակների և գործերի գործողությունների անհայտ եղանակների կիրառման բարձր հավանականություն հատկապես օպերատիվ և մարտավարական օղակներում:

Ապագայի զինված պայքարում հարկավոր է հաշվի առնել ներքին զինված հակամարտությունների և հակահարձակողական գործողությունների առանձնահատկությունները: Դրանց շարքին կարելի է դասել.

- խոշոր զինված կազմավորումների դեմ գործողությունների նոր ձևերի ու եղանակների առաջացումն ու կիրառումը

լեռնային կտրտված տեղանքում և բնակավայրերում,

- զինված կազմավորումներին և բնակչությանն ուղղված տեղեկատվահոգեբանական և հետախուզամարտական գործողությունների լայն վարումը,
- հակամարտության ամբողջ տարածքում մարտական գործողությունների միաժամանակյա վարումը,
- բնակավայրերում ուժերի և միջոցների կիրառման սահմանափակումները:

Այսպիսով, ապագայի պատերազմների պարզաբանված առանձնահատկությունները առաջ են բերում զինված ուժերի հիմնական խնդիրների նոր ընկալումների հիմնախնդիրը: Այդ խնդիրները պետք է հաշվի առնեն թե՛ ռազմաքաղաքական իրադրության զարգացման առանձնահատկությունները տարածաշրջանում և թե՛ զինված պայքարի բնույթը, ինչպես նաև՝ մարտական գործողությունների վարման սկզբունքների հնարավոր զարգացման ուղղությունները՝ հաշվի առնելով քաղաքական իրադրության փոփոխությունները և պատերազմավարման միջոցների կատարելագործումը:

ՌԴ ՉՌԲ Ցամաքային գործերի և ԱՄՆ բանակի օպերացիաների և մարտի վարման մարտական համակարգերի զարգացման ցուցանիշների համեմատություն:

Աղյուսակ 1.

Չորքերի կառուցվածքի և համակարգերի մշակում	ՌԴ ՉՌԲ (Ցամաքային գործեր)	ԱՄՆ բանակ (Ցամաքային գործեր)
<b>Հետախուզության համակարգ</b>	Չարգանում է դանդաղ և չի բավարարում գործերի կարիքներին: Հատկապես ժամանակային ցուցանիշներով, խորության և ճշգրտության առումով:	Ի շահ օպերացիաների և մարտի վարման ստեղծել են հետախուզության արդյունավետ համակարգ:
<b>Չորքերի և զենքի կառավարման համակարգ (ՉԿԱՀ) (ATCS)</b>	Կիրառվում են կառավարման ավտոմատացված համակարգերի (ԷՀՄ) և կապի նոր միջոցների առանձին տարրեր:	Ստեղծել և լայնորեն կիրառում են գործերի և զենքի կառավարման ավտոմատացված համակարգեր:
<b>Կրակային խոցման համակարգ</b>	Կրակային խոցման հիմնական մասնաբաժինը հատկացվում է ՀՁ և Հ (մասնաբաժնային մասնակցությունը 70%): Խնդրահարույց է բանակային և ճակատային ավիացիայի դերը:	Կրակային խոցման հարցում վճռական դերը պատկանում է օդուժին (մարտավարական և բանակային): Ստեղծվել են կրակային խոցման կառավարման ՉԿԱՀ:
<b>Բանակային ավիացիա</b>	Չունեցավ պատշաճ զարգացում: 2003 թվականին փոխանցվել է ՌՕՌԲ կազմի մեջ: Ցամաքային գործերում բանակային ավիացիայի կառավարման մարմինները կրճատվել են:	Ստեղծվել են հզոր բանակային ավիացիա և գործերը համարում են նոր ուղղաթիռներով (միավորումներում՝ մինչև 100 միավոր, ԲԿ-ում՝ հաշվի առնելով դիվիզիաների միջոցները՝ մինչև 700 միավոր):
<b>Թերև և ակտիվ գործեր</b>	Համարված էին ԴԳԲԲ – երով, սակայն ուղղաթիռների թերհամարվածության պատճառով զարգացում չստացան: ՕԴԶ-երը ՉՌԲ-ի ինքնուրույն գորատեսակ է և առայժմ ունի դեսանտավորման սահմանափակ հնարավորություններ:	Ստեղծվել են թեթև դիվիզիաներ և բրիգադներ (ընդհանուր՝ մինչև 20), ինչը կազմում է բանակի դիվիզիաների և բրիգադների ընդհանուր թվի մոտ 50%-ը, այդ թվում՝ լիարժեք համարված օդադեսանտային և օդազոտային դիվիզիաները:

<b>Տեղեկատվական հակապայքարի համակարգ</b>	Օպերատիվ և մարտավարական մակարդակներում, որպես համալիր համակարգ առայժմ չի ստեղծվում: Առկա են և գործում են դրա առանձին տարրեր (ՌԷՊ, քողարկում, և այլն):	Ստեղծել են բոլոր մակարդակների, այդ թվում օպերատիվ և մարտավարական, տեղեկատվական հակապայքարի համակարգ:
<b>Եզրահանգումներ</b>	Էականորեն սահմանափակված են ժամանակակից օպերացիաների վարման հնարավորությունները:	Ունեն օպերացիաների և մարտի վարման նոր եղանակների կիրառման լիարժեք հնարավորություններ:

**Օգտագործված գրականության ցանկ**

1. **Clausewitz, Carl von** On War: Introduction by Michayel Howard and Peter Paret., Princeton University Press, New Jersey. URL: <https://www.usmcu.edu/Portals/218/EWS%20On%20War%20Reading%20Book%201%20Ch%201%20Ch%202.pdf>
2. **Адам Смит.** Исследование о природе и причинах богатства народов. – М.: издательство АСТ. 2022. – 1380 с.
3. **[Hobbs, Thomas]** Leviathan or the Matter, Forme, & Power of a Common-wealth Ecclesiasticall and Civil. By Thomas Hobbes of Malmesbury. – London, 1651. – 445 p. URL: <https://socialsciences.mcmaster.ca/econ/ugcm/3ll3/hobbes/Leviathan.pdf>
4. **Jean-Jacques Rousseau** The Social Contract. Copyright © Jonathan Bennett. 2017. URL: <https://www.earlymoderntexts.com/assets/pdfs/rousseau1762.pdf>
5. **Field Manual (FM) 3-0., OPERATIONS.,** OCTOBER 2022. 7-45 URL: [https://armypubs.army.mil/epubs/DR\\_pubs/DR\\_a/ARN36290-FM\\_3-0-000-WEB-2.pdf](https://armypubs.army.mil/epubs/DR_pubs/DR_a/ARN36290-FM_3-0-000-WEB-2.pdf)
6. **[Strange, Joseph L. & Iron, Richard]** Center of Gravity What Clausewitz Really Meant. By Joseph L. Strange and Richard Iron. Pp. 20-27. // JFQ issue thirty-five. URL: <https://apps.dtic.mil/sti/pdfs/ADA520980.pdf>
7. **[Kenny, Graham]** Strategic Planning. Strategic Plans Are Less Important than Strategic Planning by Graham Kenny, June 21, 2016 URL: <https://hbr.org/2016/06/strategic-plans-are-less-important-than-strategic-planning>
8. **Оганесян Г. О.,** О необходимости развития способов выполнения боевых задач с применением роботизированных комплексов военного предназначения. С. 9-16. // «Paradigmata poznani». Vedecko vydavatelске centrum Sociosfera-CZ s.r.o. № 4, 2022.
9. **Рогозин Дмитрий** Война и мир в терминах и определениях. – М.: Издательский дом «Порог». 2004. – 624 с.
10. **Joint Publication 1** URL: [https://dml.armywarcollege.edu/wp-](https://dml.armywarcollege.edu/wp-content/uploads/2022/12/JP-1-Doctrine-for-the-Armed-Forces-of-the-US-2013.pdf)
11. **Военная доктрина** Российской Федерации URL: [https://thailand.mid.ru/ru/o\\_rossii/vneshnyaya\\_politika/voennaya\\_doktrina\\_rf/](https://thailand.mid.ru/ru/o_rossii/vneshnyaya_politika/voennaya_doktrina_rf/)
12. **Черных Г. С., Старостин А. С.,** Оружие на новых физических принципах, проблемы защиты населения и территорий от его поражающих факторов. // Научно-аналитический сборник «Стратегия гражданской защиты: проблемы и исследования» . ISSN 2224-8617. Том 5, 2015, № 2(9).
13. **Кропман В.** Германия закупит израильскую систему ПРО Arrow-3// Эл. ресурс русской службы DEUTSCHE WELLE. 28.09.2023. URL: <https://www.dw.com/ru/germania-zakupit-izraillskuu-sistemu-pro-arrow3/a-66952055>
14. В России создают новую систему ПВО С-550. Что это - секрет. // Эл. ресурс русской службы BBC NEWS. 10 ноября 2021. URL: <https://www.bbc.com/russian/news-59217120>
15. **Milley, Mark A., Esper, Mark T.** The Army Strategy. – 11 p. URL: [https://www.army.mil/e2/downloads/rv7/the\\_army\\_strategy\\_2018.pdf](https://www.army.mil/e2/downloads/rv7/the_army_strategy_2018.pdf)
16. NATO’s military presence in the east of the Alliance. // Electronic resource NATO. 08 Dec. 2023. [https://www.nato.int/cps/en/natohq/topics\\_136388.htm](https://www.nato.int/cps/en/natohq/topics_136388.htm)
17. From power projection to power protection. Revitalizing Conventional Deterrence in NATO
18. Supreme Headquarters Allied Power Europe. Belgium. 17 Dec 10. Allied Command Operations Comprehensive Operations Planning Directive. Copd Interim V1.0. – 412 p. URL: <https://info.publicintelligence.net/NATO-COPD.pdf>
19. Army of 2030 // electronic resource U.S. ARMY. October 5, 2022. URL: <https://www.army.mil/article/260799>
20. Warden’s Theory of Strategic Paralysis. Air University Press Stable URL: <http://www.jstor.com/stable/resrep13762.9>

Տճանաչանման/Վերլուծական է՝ 10.04.2024  
 Րեզենզիան/Գրախոսական է՝ 15.04.2024  
 Մոտիվացիոն/Ընդունում է՝ 18.04.2024